ԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Քաղաքական զարգացման փորձը վկայում է, որ ցանկացած հասարակության հիմնական բնութագրիչ հանդիսացող արժեքների համակարգը, անխուսափելիորեն ենթադրում է պետության և հասարակության, պետության և անհատի փոխհարաբերության վերաբերյալ տարբեր սոցիալ-փիլիսոփայական ու գաղափարա-քաղաքական հաստատումների առկայությունը:

XVIII դարի անգլիացի հայտնի փիլիսոփա և քաղաքական գործիչ է. Բերկն առաջիններից մեկն էր, որ տվեց քաղաքական կուսակցության սահմանումը: Ըստ նրա *«Կուսակցությունը մարդկանց կազմակերպություն է, որոնք համախմբվել են համատեղ ուժերով ազգային շահի ներկայացման նպատակով՝ առաջնորդվելով որոշ առանձնահատուկ սկզբունքներով, որոնց շուրջ նրանք ձեռք են բերել համաձայնություններ»*[1]: Կուսակցությունների ժամանակակից մեկնաբանությունները՝ համապատասխան տիպաբանական հայտանիշներով, ձևավորվել են XIX-XX դարի սկզբներին: Բավականին իրատեսական է գերմանացի հետազոտող Վ. Հասբախի տեսակետը, որը կուսակցությունը դիտարկել է որպես *«միևնույն քաղաքական հայացքներով և նպատակներով օժտված մարդկանց միավորում, որոնք ձգտում են հասնել իշխանության, այն սեփական շահերի իրականացման նպատակով օգտագործելու համար»*[2]: Առավել հետաքրքրական սահմանում է տվել Մ.Վեբերը, որը գտնում էր, որ կուսակցությունները *«հասարակական կազմակերպություններ են՝ անդամների կամավոր սկզբունքների ընդգրկմամբ, որոնք նպատակ ունեն իրենց ղեկավարների համար ձեռք բերել իշխանություն և ակտիվ անդամների համար ապահովել համապատասխան պայմաններ /հոգևոր և նյութական/, որը հնարավորություն կընձեռի ունենալ նյութական շահ կամ անձնական արտոնություններ, կամ*

[1] Шмачкова Т.В. Мир политических партий// Политические исследования.–1992-N1-2:
[2] Տես նույն տեղում:

երկուսն էլ միաժամանակ»[3]:

Այդ երկրների հիմնական կուսակցությունները իրենց փոխազդեցություններով, փոխհարաբերություններով, փոխադարձ կոնֆլիկտներով և իշխանությունում փոխադարձ ռոտացիայով հանդես են գալիս որպես ընդհանուր կուսակցական համակարգ՝ մեծապես ապահովելով ողջ քաղաքական համակարգի կենսունակությունն ու գործունեությունը:

Ժամանակակից ձևաչափերով ընթացող միջկուսակցական պայքարը սկսվել է դեռևս 1688թ. («Մեծ պակտ»)՝ Մեծ Բրիտանիայում: Այդ պայքարի առանցքում ընկած էր թագավորական իշխանության հաշվին խորհրդարանական ինստիտուտի իրավասությունների ընդլայնման խնդիրները: Մրցակցող քաղաքական ուժերն աստիճանաբար կազմավորեցին համեմատաբար կայուն և միաբան կուսակցական խմբավորումներ, որոնք անվանվեցին *վիգեր և տորիներ* (իսկ XX դարից՝ լիբերալներ և պահպանողականներ)[4]:

Գնահատելով նմանատիպ զարգացումները՝ XVIII դարի անգլիացի քաղաքական գործիչ է. Բերկը 1769թ. իր պամֆլետներից մեկում գրում է «Անկախ այն բանից, թե կուսակցությունները որքանով են գործում *«բարու»* կամ *«չարի»* շահերի շրջանակներում, կուսակցական բաժանումը կառավարման ազատական համակարգի անքակտելի երևույթ է»:

Կուսակցությունների առաջացման համար անհրաժեշտ է քաղաքական ներկայացուցչության ինստիտուտ, որում որպես օրգանական սինթեզ միավորվում են ժողովրդավարական ներկայացուցչության երկու կարևորագույն մոդելներ. մի կողմից ոչ ոք իրավունք չունի կառավարել մյուսին, առանց վերջինի համաձայնության և երկրորդը՝ քանի որ յուրաքանչյուր անհատ չի կարող անմիջականորեն մասնակցել պետական կառավարմանը, նրանց տարբեր խմբերի շահերն ու իրավունքները իշխանական համակարգում կարող են ներկայացված լինել լիազորված անձանց միջոցով, որոնք օժտված են համապատասխան իրավասություններով ու արտոնություններով: Այս սկզբունքը յուրաքանչյուր երկրում ձևակերպվել և հաստատվել է տարբեր կերպ:

Ներկայացուցչության գաղափարը որպես անձնական ազատությունների երաշխիք, համառորեն առաջադրվել է XVII դարի կեսերին՝ անգլիական հեղափոխական գործիչների կողմից: Այս գաղափարը ձևակերպել, մշակել և առաջ է մղվել հանրահայտ քաղաքական փիլիսոփաներ Ջ.Լոքի և Շ. Լ. Մոնտեսքյոյի, Ի.Կանտի, Ա. դե Թոքվիլի, Ջ.Ս. Միլլի և այլոց կողմից՝ XVII-XIX

---

[3] Перегудов С.П., Холодковский К. Г. Политическая партия: мировой опыт и тенденции развития//Коммунист. –1991. N 2.

[4] Политические партии , Справочник, Москва 1981г. стр. 37-41.

դդ: Այն իր քաղաքական արտահայտածները գտավ մարդու բնական և անօտարելի իրավունքներում, որոնք ամրագրվել են ԱՄՆ անկախության հռչակագրում, ժամանակակից աշխարհի քաղաքական պատմության առանցք հանդիսացող մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին հռչակագրում և այլ փաստաթղթերում:

Ներկայացուցչական իշխանություններում տարբեր խավերի և սոցիալական խմբերի ներկայացուցիչների ընտրության ակզբունքները, ըստ էության առաջ բերեցին խնդիրներ այդ սկզբունքների քաղաքական իրացման մեթոդների և միջոցների վերաբերյալ: Որպես դրանց իրացման միջոցներ, ներկայումս ինդուստրիալ զարգացած բոլոր երկրներում աստիճանաբար ձևավորվեցին և իրենց տեղը, դերն ու դիրքերն ամրապնդեցին քաղաքական կուսակցությունները:

Ըստ էության, կուսակցությունների ձևավորմանը նպաստող կարևորագույն գործոն են քաղաքական համակարգերի կազմակերպչական գործառույթը և ինչ-որ կերպ հասարակական բազմազան շահերի տարանջատման և ներկայացման նպատակով որոշակի պետական-քաղաքական կառույցի ձևավորման անհրաժեշտությունը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ փոխադարձ սերտ կապ է նկատվում քաղաքական կուսակցությունների առաջացման և քաղաքական ներկայացուցչության ազատական տեսության ձևավորման միջև: Ինչպես արդեն նշել ենք, մարդկանց իրավահավասարության լուսավորչական գաղափարը ենթադրում էր, որ ոչ ոք իրավասու չէ կառավարել մյուսին, առանց վերջինի համաձայնության և քանի որ յուրաքանչյուր ոք ի վիճակի չէ անմիջականորեն մասնակցել պետության կառավարմանը, ապա հանրապետական կառավարման մոդելը ենթադրում է իշխանական համակարգում տարբեր սոցիալական խմբերի շահերի ներկայացուցչության սկզբունքը:

Թե ինչ մեծ նշանակություն է տրվում ներկայացուցչության սկզբունքին վկայում է այն փաստը, որ Ջ.Մեդիսոնը նույնականացնում է հանրապետությունը ներկայացուցչականության հետ: Ըստ նրա ընտրված ներկայացուցիչներն ավելի լավ կարող են կառավարել, քան հենց ինքը՝ ժողովուրդը:

Նմանօրինակ մոտեցմամբ էլ առաջ եկան ներկայացուցչականության իրացման օպտիմալ մեխանիզմների ու ճանապարհների որոնումները: Մոնտեսքյոն գտնում էր, որ որպես կանոն մարդիկ ավելի լավ գիտեն իրենց բնակավայրի կամ շրջանի հիմնախնդիրներն ու շահերը, քան մյուսներինը: Դրա համար իշխանական մարմինների ներկայացուցիչներին նպատակահարմար է ընտրել ոչ թե ողջ երկրից այլ տվյալ բնակավայրից կամ տեղանքից, դրանք կազմավորելով մեկ ընտրատարածքում: Այս սկզբունքի հիման վրա Անգլիայում

ձևավորվել է այսպես կոչված «*փաստացի ներկայացուցչություն*» տեսությունը, որն ըստ էության գտնում է, որ օրենսդիր մարմնի անդամները ներկայացնում են ոչ միայն առանձին խմբեր ու սոցիալական շերտեր, այլ դրանց ողջ համախմբությունը: Այդ իսկ պատճառով էլ նշանակություն չունի, թե ինչպես, ինչ թվաքանակից և որտեղ են նրանք ընտրվում: Ընդ որում այս տեսության ջատագով վիգերը գտնում էին, որ օրենսդիր մարմնի ընտրված անդամները չպետք է անմիջական կախման մեջ լինեն իրենց ընտրողներից: Հիմնավորելով այս թեզիսը, է.Բերկը 1774թ. Բրիստոլում, ընտրված ներկայացուցիչների առջև ունեցած իր հայտնի ելույթում պնդում էր, որ օրենսդիր մարմինը չպետք է հանդես գա որպես միմյանցից տարբեր և հակադրվող շահեր արտահայտող դեսպանների կոնգրես, այլ պետք է լինի ողջ անգլիական ժողովրդի ներկայացուցիչների համաժողով /ֆորում/, առաջնորդվելով «*համընդհանուր բարիքի*» իրականացման ձգտումներով:

Ընդդեմ «*Փաստացի ներկայացուցչության*» տեսության, ամերիկյան քաղաքական գործիչները առաջ քաշեցին քաղաքական աշխարհագրական ներկայացուցչության հայեցակարգը, համաձայն որի օրենսդիր ժողովի անդամները ընտրվում էին որպես կոնկրետ տարածքի կամ բնակչության խմբի ներկայացուցիչ և ոչ թե ողջ պետության բնակչության ներկայացուցիչներ: Օրինակ ներկայացուցիչների պալատի վերաբերյալ Ջ.Մեդիսոնը կարևորում էր նրա դերը այն իմաստով, որ նրա ներկայացուցիչներն «անմիջականորեն կախված են ընտրողներից»: Ընդ որում Մեդիսոնը գտնում էր, որ ներկայացուցիչների հիմնական գերխնդիրը պետք է կայանա սեկցիոն շահերի պաշտպանության և ապահովության մեջ: Նա համոզված էր, որ հասարակության տարբեր շահերի միջև հակասություններն անխուսափելի են և առաջ են բերում խմբակցային վեճեր տարբեր սոցիալ-քաղաքական խնդիրների շուրջ: Եվ գտնում էր, որ ընտրված ներկայացուցիչները գործելու են որպես այն հատուկ շահերի «պատգամավորներ», որոնք առաջադրվել են ընտրողների կողմից: Ելնելով այդ հայեցակարգից՝ գիտնականները փորձում էին գտնել հասարակության այս կամ այն սոցիալական խմբի կամ խմբակցությունների գերիշխանության հաստատման դեմ ուղղված միջոցներ, որում հատկապես կարևորվում էր հանրապետության տարածքային սահմանների ընդլայնումը: «Որքան փոքր է հասարակությունը,-գրում է Ջ.Մեդիսոնը,- այնքան փոքր է հատուկ ընդգծված կուսակցությունների և շահերի առաջացման հավանականությունները և հաճախ հասարակության մեծամասնությունը կարող է հայտնվել միևնույն կուսակցության մեջ: Տարածքների ընդլայնմամբ և բնակչության ավելացմամբ

առաջ կգան նոր կուսակցություններ, որոնք կարտահայտեն հասարակության բոլոր շերտերի շահերը»[5]:

Որպես տարբեր խմբակցությունների և խմբավորումների շահերի հավասարակշռման և այս կամ այն գերիշխանության արգելման հիմք, Ջոն Լոքը, Թոմաս Հոբսը, Շառլ Լուի Մոնտեսքյոն, ժան ժակ Ռուսոն առաջադրել են իշխանության տարանջատման սկզբունք և «*կանխարգելումների և հակակշիռների*» համակարգը: Սակայն այն ժամանակներում ընդունված պետական իշխանության երեք ճյուղերից երկուսի՝ օրենսդիրի և գործադիրի ընտրության սկզբունքով ձայնի իրավունքը ենթադրում էր քաղաքական ուղղությունների և լիդերների միջև ընտրության այլընտրանքներ, ինչը և առաջացնում էր ընտրողներին գոյություն ունեցող այլընտրանքները ներկայացնելու անհրաժեշտությունը: Այստեղ էլ կուսակցություններն ու կուսակցական մրցակցությունը սկսեցին ձեռք բերել առանցքային դերակատարումներ: Աստիճանաբար առաջ էր մղվում այն համոզմունքը, որ քաղաքական պայքարում կուսակցությունները բանավիճելով ընդդիմադիր կուսակցությունների հետ, ձեռք են բերում նոր աջակիցներ, և հակառակը, թույլ ընդդիմության դեպքում կուսակցությունները կորցնում են դրանց:

«*Քաղաքական կուսակցություն*» հասկացությունը առաջացել է XIX դարում՝ ընտրական իրավունքի տարածմանը և ներկայացուցչական ինստիտուտների ձևավորմանը զուգահեռ: Որպես կազմակերպություն, նրանց գոյությունը իմաստավորվում է ընտրազանգվածի ձայների համար մղվող պայքարի արդյունքում՝ պետական մարմիններում համապատասխան դիրքերի ձեռքբերմամբ: Հետագայում դրանց գործունեության դաշտն ընդլայնվելով՝ շրջանառության մեջ դրվեց նաև «*քաղաքական կազմակերպություն*» հասկացությունը:

«Քաղաքական կազմակերպության» շարքին էին դասվում այն կազմակերպությունները, որոնք ընդգրկված չէին մրցակցային ընտրապայքարներում: Դրանք մանր կուսակցություններ են, որոնք չունեն իրական հնարավորություններ ընտրապայքարում՝ իշխանական պաշտոններին հավակնելու և ընտրազանգված ունենալու համար. հեղափոխական կազմակերպություններ են, որոնք ձգտում են ընտրականության սկզբունքի տապալմանը, ինչպես նաև իշխող խմբեր են տոտալիտար պետություններում:

Կուսակցությունների դերի, գործառույթների և նշանակության օրինաչափությունների վերաբերյալ XIX դարից սկսված բանավեճերը դարավերջին

---

[5] Տես. Шмачкова Т.В. Мир политических партий// Политические исследования. – 1992-N1-2

դարձան քաղաքական համակարգերի ուսումնասիրման կարևորագույն բաղկացուցիչներ: Օրինակ, եթե 1861թ. Մեծ Բրիտանիայի խորհրդարանական ընտրություններում կուսակցություններն ընդհանրապես չէին մասնակցում, արդեն 1951թ. բարձրագույն քաղաքական կառույցներում կուսակցություններից անկախ որևէ հավակնորդ չի ընտրվել[6]:

Գոյություն ունի գաղափարական կողմնորոշիչներից բխող՝ կուսակցությունների առաջացման որոշակի ժամանակագրական հաջորդականություն: Լիբերալիզմն ու լիբերալ կուսակցություններն առաջացել են ավատատիրական ռեժիմի դեմ մղվող պայքարում: XIX դարում Եվրոպայում լիբերալներն առաջինը ստեղծեցին սեփական գաղափարախոսությամբ և պառլամենտական խմբակցություններ ունեցող կուսակցություններ: Դրանց թվում առաջիններից էին Գերմանիայի առաջադիմական կուսակցությունը, Բելգիայի ազատական կուսակցությունը և այլն: Հետևելով նրանց օրինակին նմանատիպ կազմակերպություն ստեղծվեց Անգլիայում պահպանողականներից կողմից՝ «*Պահպանողականների ակումբ*» անվանմամբ: Վերոհիշյալ կառույցները դեռևս երկար ժամանակ իրենց համարում էին ոչ թե կուսակցություններ, այլ համախոհների միավորումներ: Ընտրական իրավունքի հետագա զարգացումները նրանց մղեցին որպես կուսակցություններ կայանալու և ամրապնդվելու գործին: Ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման փուլում հզոր գործոն հանդիսացող ֆրանսիական հեղափոխությունը նպաստեց եվրոպական մայրցամաքում տարասեռ պահպանողական խմբավորումների ձևավորմանը, որոնք իրենց անվանում էին «*արիստոկրատներ*», «*ռոյալիստներ*», «*պալատական կուսակցություններ*», իսկ XIX դարի 2-րդ կեսերին և XX դարի սկզբներին ձևավորվեցին պահպանողական կուսակցություններ: Ըստ էության դրանք ձևավորվեցին որպես լիբերալ կուսակցությունների հակակշիռ ուղղություններ: *Բանվորական* կուսակցությունները առաջացել են կապիտալիստական համակարգերի դեմ մղվող պայքարում, *ագրարային* կուսակցությունները՝ ինդուստրիալ զարգացման դեմ, *քրիստոնեական* կուսակցությունները՝ սեկուլյար և հակակլերիկային շարժումների դեմ պայքարում, *կոմունիստները*՝ սոցիալ-դեմոկրատների դեմ, իսկ *ֆաշիստները*՝ դեմոկրատական բոլոր արտահայտաձևերի դեմ մղվող պայքարում և այլն:

XX-րդ դարի 90-ականների առաջին կեսը նշանավորվեց կուսակցությունների և կուսակցական համակարգերի ուսումնասիրություններով: Ամենատարբեր պարբերականներում հրապարակված բազմաթիվ հոդվածները, թեմա-

---

[6] М. Дюверже Политические партии Москва 2000г. Стр. 298-299.

տիկ աշխատանքներն ու հետազոտությունները ևս մեկ անգամ հակադրվում են կուսակցությունների դերի անկման մասին որոշ պնդումների, ինչն այսօր իրականությանը չի համապատասխանում՝ ընդհակառակը, էլ ավելի նկատելի են դառնում կուսակցական ժողովրդավարության նորացման գործոններն ու պայմանները: Կուսակցությունները՝ պոստինդուստրիալ, պոստմոդեռնիստական աշխարհում ոչ թե անհետացան կամ հարմարվողական դրսևորումներ ցուցաբերեցին փոփոխվող միջավայրերում, այլ նույնիսկ չկորցրին քաղաքական համակարգում ունեցած իրենց առաջատար դերակատարումները: Դրանք հանդիսացան քաղաքականության մեջ նոր իրողություններն ու երևույթները ընկալող այն ինստիտուտները, որոնք հաջողությամբ կիրառելով հազարամյակի վերջին ծավալվող ժողովրդավարացման բարենպաստ պայմանները հանդես եկան որպես քաղաքական նորամուծությունների նախաձեռնողներ[7]: Կարելի է ասել, որ ինչպես տնտեսության շուկայական մոդելը, այնպես էլ պետական իշխանության համար պայքարող՝ այլախոհության վրա հիմնված քաղաքական ուժերի համախմբություն հանդիսացող կուսակցական ժողովրդավարությունները ներկայումս հանդիսանում են ժամանակակից աշխարհի առավել հիմնարար արժեքներ քան նախկինում գործող կուսակցական համակարգերն էին: Իհարկե, նախկին քաղաքական կյանքի փուլերի համեմատ ներկայումս մենք կարող ենք առանձնացնել կուսակցական կառույցների և գործունեությունների բազմաթիվ տարբերություններ: Եվ այդ տարբերությունները բնականաբար միշտ իրենց կենտրոնում են պահում այն հարցադրությունը, թե արդյո՞ք մենք գործ ունենք միևնույն ֆենոմենի՝ քաղաքական կուսակցության հետ: Այդյո՞ք մենք միևնույն անվանումը չենք տալիս բոլորովին տարբեր քաղաքական միավորումներին: Որո՞նք են քաղաքական կազմակերպությունների այն մոդելների ծագումնաբանական հայտանիշները, որոնք այսօր անվանվում են «*կադրային կուսակցություններ*», «*զանգվածային կուսակցություններ*», «*համընդհանուր կուսակցություններ*», «*կարտելային կուսակցություններ*» (կարելի է բերել ժամանակակից քաղաքականության հետ առնչվող կուսակցությունների բազմաթիվ այլ անվանումներ):

Ըստ էության այստեղ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները:

<u>Նախ և առաջ</u> ակնհայտ է, որ գրեթե բոլոր հետազոտողների կողմից ընդունելի են այն պարադիգմատիկ համազմունքը, որ կուսակցությունը որպես քաղաքական կազմակերպություն պետք է դիտարկվի «*քաղաքացիական*

---

[7] Л.В. Сморгунов, Современная сравнительная политология Москва 2002, стр. 306.

հասարակություն- կուսակցություն-պետություն» հարաբերությունների համակարգում: Սա հետևաք է այն իրողության, ըստ որի կուսակցություններն այն միակ ինստիտուտներն են որոնք իրենց չեն հակադրում ոչ պետությանը և ոչ էլ քաղաքացիական հասարակությանը: Ժամանակի հետ փոփոխվող հասարակական կապերի մեխանիզներում կուսակցությունները մնում են որպես պետության կողմից հասարակական շահերի բացահայտման և շոշափման ամենաէական մեխանիզմներ:

Երկրորդ, կուսակցություններն առավելապես համարվում են քաղաքական միավորումներ: Դժվար թե գտնվի մեկ այլ միավորում որն իր քաղաքական նշանակությամբ համեմատելի լինի կուսակցություններին: Նույնիսկ ներկայիս պետությունները մեծապես հանդես են գալիս որպես վարչա-կառավարական, ադմինիստրատիվ մարմիններ և միայն կուսակցական համակարգերի միջոցով են ձեռքբերում քաղաքական որակումներ: Քաղաքականության շուրջ անընդհատ կենտրոնացումները, կուսակցություններին հնարավորություն են տալիս հանդես գալ որպես հասարակության շահերի և հասարակական կամքի հզոր արտահայտիչներ, ինչպես նաև կուտակած քաղաքական կապիտալի հասարակական իրացմամբ և շահավետ փոխանակումներով: Իհարկե, կարելի է նաև պնդել, որ կուսակցությունները ոչ թե զուտ քաղաքականության, այլ ժամանակակից քաղաքական մարմնի որոշակի մետաֆորային կերպարներն ու դրանց արտահայտիչներն են: Արտահայտելով քաղաքականության նշանակությունը, կուսակցությունները ստանում են նոր անվանումներ ձեռք բերելու լիակատար հնարավորություններ: «Կուսակցությունների նոր կերպարների» ընտրությունը՝ *«պրոֆեսիոնալ կառույցների կուսակցություններ»*, *«մեդիա կուսակցություններ»*, *«կարտելային կուսակցություններ»*, վկայում է նրանց կողմից քաղաքական նոր իրողությունները նշանակալի դարձնելու ձգտումների մասին[8]:

Երրորդ՝ ներկայիս ժողովրդավարությունը իր բոլոր իդեալական ձևերով և իրական մոդելներով հանդերձ հանդես է գալիս որպես կուսակցական ժողովրդավարություն: Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս դեպքում նկատի ունենք հասարակության՝ պետության կազմակերպական ձևի առկայությամբ գործող ժողովրդավարությունը: Իհարկե, կուսակցական ժողովրդավարության հետ մեկտեղ գոյություն ունեն նաև ժողովրդավարության այլ ձևեր, սակայն տվյալ դեպքում կուսակցական ժողովրդավարությունն իրենից ներկա-

---

[8] Beyme K. , Party Leadership and Change in Party Systems: Towards a Postmodern Party State?// Government and Opposition. 1996. Vol. 31. N2

յացնում է, իշխանության և նրա ձևավորման մեխանիզմների հետ կապված ազատական պատկերացումներով քաղաքական ժողովրդավարություն:

Քաղաքացիական հասարակությունը, կուսակցության տիպերը և ժողովրդավարության մոդելները

Ժամանակակից աշխարհում կուսակցությունների տիպաբանության փոփոխությունները հիմնականում պայմանավորվում են ժողովրդավարական ռեժիմների փոփոխմամբ և պատահական չէ, որ ժողովրդավարական քաղաքական համակարգերի դասակարգման համար որպես անհրաժեշտ սկզբունք կիրառվում են կուսակցական հարաբերությունների առանձնահատկությունները: Ելնելով նշվածից և հաշվի առնելով հոդվածում քննարկված «կուսակցական ներկայացուցչության» հիմնախնդիրները, փորձենք ի մի բերել քաղաքացիական հասարակության, նրա տիպերի, քաղաքական կուսակցությունների, ժողովրդավարության մոդելների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունները: Իհարկե որոշ իմաստով այն հնարավոր է ընդհանրացնել «իդեալականացված տիպերի» համար, որոնք թույլ են տալիս համակարգել ուսումնասիրվող խնդիրների շուրջ ունեցած մեր պատկերացումները:

Ենթադրվում է որ էլիտար կուսակցությունները որպես կանոն բավականին հաջող հանդես են գալիս *սահմանափակ ժողովրդավարության* պայմաններում (կամ ըստ Ռ.Դալի գործում են «փակ հեգեմոնիայի» համակարգում), երբ նրանց միջև մրցակցությունը տեղի է ունենում սահմանափակ քաղաքական մասնակցությամբ[9]: Այս պարագայում քաղաքացիական հասարակությունն ինքն իրեն հակադրում է պետությանը և հենվելով մասնավոր հատվածի ինքնուրույնության վրա մեծամասամբ խմբավորվում է «ակումբային» սկզբունքներով: Քաղաքացիական հասարակության կազմավորման այս սկզբունքը տվյալ պարագայում նշանակում է, որ հասարակությունը դասակարգվում է հարաբերականորեն փակ գործարար-արհեստակցական և ակումբային համախմբություններով, որոնք հրապարակային քաղաքական ոլորտում հանդես են գալիս իրենց առավելապես ակտիվ և պատրաստված գործիչներից կազմված խմբերով: Չնայած, որ այս դեպքում քաղաքականությունը չի դիտվում որպես մասնագիտություն կամ գործարարություն, այնուամենայնիվ էլիտար կուսակցությունները դեռևս ձևավորվում և գործում են քաղաքացիական հասարակության ոլորտներում՝ սպասարկելով դրանց շահերը: Էլիտաները պայքարում են իշխանության համար, իրենց շահերը ներկայացնելով

---

[9] Տես. Л.В. Сморгунов, Современная сравнительная политология Москва 2002, стр. 319.

որպես համընդհանուրի շահ: Այդ պայքարում ժողովրդավարության սկզբունքը ոչ միայն մրցակցությունն է, այլ պետական կառավարման համակարգում իրենց շահերն արտահայտող խմբերի հերթափոխերի ապահովումը: Ընդ որում մրցակցությունը գնահատվում է որպես հրապարակային, իսկ էլիտաները՝ հարաբերականորեն բաց:

Զանգվածային կուսակցությունները հաջողությամբ համադրվում են *ռեպրեզենտատիվ (ներկայացուցչական) ժողովրդավարությանը*: Այստեղ գործում է, ոչ միայն իշխանության համար տարվող մրցապայքարը, այլև առկա է հարաբերականորն լայնածավալ զանգվածային մասնակցության գործոնը, որն արտահայտվում է համընդհանուր ընտրություններով: Կուսակցությունները ձգտում են արտահայտել սոցիալական խմբերի որոշակի շահեր, որի արդյունքում ընտրյալ անհատներն ու կուսակցություններն իրենց քաղաքական գործունեությամբ պատասխանատու են ընտրազանգվածի առջև: Այս դեպքում քաղաքացիական հասարակությունը բևեռացվում է հարաբերականորեն կայուն և խոշոր հատվածների, ըստ որոշակիորեն ընդգծված յուրահատկության՝ սոցիալական, ազգային, էթնիկ, կրոնական և այլ հիմքերով: Այն առավելապես հնարավոր է միավորել ազդեցիկ և հեղինակավոր ՁԼՄ-եր ունեցող կուսակցությունների միջոցով և կուսակցությունների կողմից սոցիալական խմբերի շահերի և իրենց քաղաքական դիրքորոշումների նույնականացումը հանդիսանում է ընտրությունների ընթացքում հասարակության քաղաքական մոբիլիզացիայի համար կարևորագույն պայմաններից մեկը: Բնականաբար ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում կուսակցություններն իրենց կողմնակիցների նախընտրական բանակն ավելացնելու նպատակներով, նույնականացման մեխանիզմներն օգտագործում են նաև ամենօրյա քաղաքական գործընթացներում:

«Համընդգրկուն» (համապարփակ) կուսակցությունները լավագույն գործունեություն կարող են ծավալել *այլախոհային (այլակարծության) ժողովրդավարության* պայմաններում, որը հնարավորություն է տալիս «ողողել» գաղափարական և ներկայացուցչական նույնականացումները: Ժողովրդավարության այս մոդելը թույլ է տալիս տարբերակել կուսակցություններն ու նրանց ծրագրերը միմիայն իշխող կուսակցության կամ կոալիցիայի հանդեպ գոյություն ունեցող ընդդիմադիրության սկզբունքով: «Համընդգրկուն կուսակցությունների» պարագայում՝ իշխանության նկատմամբ վերահսկողության գործում ընտրությունները չունեն էական նշանակություն, քանի որ ընդդիմադիր լինելն ապահովում է փոքրամասնության իրավունքների և շահերի պաշտպանությունն ու իշխող մեծամասնության նկատմամբ վերահսկողությունը:

Քաղաքացիական հասարակության այլակարծությունը մեծապես չեզոքացնում է քաղաքական նույնականացման հնարավորությունները և այս դեպքում հասարակական խմբերը վերածվում են ամորֆ շարժումների, որոնց վրա քաղաքական կուսակցությունները կարող են հենվել միայն որոշակի գաղափարախոսությունից և սեփական հստակ քաղաքական հայացքներից հրաժարվելու կամ դրանց վերածևակերպելու միջոցով: Այս դեպքում պետությունը հեշտությամբ կարողանում է վերահսկել կուսակցական գործունեությունը՝ քաղաքական կուսակցություններին օգտագործելով քաղաքացիական նախաձեռնությունների քաղաքական ինստիտուցիոնալացման գործընթացներում:

«Կարտելային կուսակցությունները» չտարբերվելով իրենց քաղաքական ծրագրերով և հանդիս գալով որպես «պետական գործիչների» ընկերակցություն, իրենց գործունեությամբ առաջարկում են *կոնսենսուալ ժողովրդավարություն*, այսինքն քաղաքական խաղի կանոնների այնպիսի հավաքածու, որն ընդունելի կլինի բոլորի կողմից, և որտեղ բոլորը կընդունեն մի շարք այնպիսի ելակետային հասարակական արժեքներ, ինչպիսիք են ասենք արդարությունը, ազատությունը, անձի և անհատի իրավունքները, շուկայական հարաբերությունները և այլն:

Ժողովրդավարության այս մոդելում, մրցակցող կուսակցությունների գործունեության համար կարևորագույն հայտանիշ է համարվում քաղաքական կարգի լեգիտիմությունն ու նրա տարրերը: Այստեղ լեգիտիմությունը (որպես սոցիալ-հոգեբանական կատեգորիա) ապահովվում է ընտրությունների և ԶԼՄ-երի միջոցով: Կառավարող էլիտայի փոփոխությունը, ընտրությունները և ընդդիմադիր կեցվածքը ժողովրդավարության այս մոդելի համար այլևս որոշիչ չեն, քանի որ հնարավոր չէ էապես տարբերակել էլիտար խմբերը, ընդդիմադիր կեցվածք ընդունելը համարվում է ցանկացած ուղղություն որդեգրած կուսակցությունների քաղաքական կարգավիճակի անբաժանելի մաս (նույնիսկ իշխանամետ կուսակցություններն ու առանձին գործիչներ որոշակի տակտիկական հաղթանակներ ձեռք բերելու նպատակով հաճախ հանդես են գալիս ընդդիմադիր հայացքներով), իսկ ընտրություններն ապահովում են համակարգի նշանակալի կուսակցությունների մուտքը իշխանություն: Արդյունքում ժողովրդավարությունը վերածվում է քաղաքական կուսակցությունների գործունեության լեգիտիմացման պարզ ընթացակարգի: Անհրաժեշտ է նշել, որ կարտելային կուսակցությունները գործում են նոր տիպի քաղաքացիական հասարակության պայմաններում, որը պայմանականորեն կարելի է անվանել «ցանցային»: Նրանում գործում են միմյանցից փոխադարձ կախվածության մեջ գտնվող հասարակական ամենատարբեր միավորումներ և սոցիալական խմբեր, որոնք

ձևավորվում են կոնկրետ խնդիրների լուծման նպատակով: Ի տարբերություն «խճանկարային» կառուցվածք ունեցող այլընտրանքային քաղաքացիական հասարակության, որտեղ հասարակական միավորումներն ունեն համեմատաբար անկախ կարգավիճակ, «ցանցային» քաղաքացիական հասարակությունը իր մեջ միավորում է հասարակական գրեթե բոլոր կառույցները, որոնք միմյանց հետ համագործակցելու միջոցով ձեռք են բերում փոխկապակցվածություն և սկզբունքորեն բաց են բոլոր տեսակի ազդեցությունների համար: Նման պայմաններում քաղաքական կուսակցություններն իրենց նախընտրական կողմնորոշումների շրջանակներում համագործակցում են քաղաքացիական հասարակության «ցանցային» կառույցների հետ, նրանց միջոցով ազդելով պետական քաղաքականության վրա: Կուսակցությունների վարած քաղաքականության լեգիտիմացման հիմնախնդիրները ծագում են հենց այն պատճառով, որ նրանք փորձում են քաղաքացիական հասարակության հետ մեկտեղ ձևավորել «հատուկ քաղաքական հասարակություններ»: Իհարկե քաղաքացիական հասարակության այդօրինակ «ցանցային» կառույցները որպես կանոն նորացնում կամ կրկնում են քաղաքական կուսակցությունների դերակատարումները[10], սակայն պետք է հաշվի առնել, որ քաղաքացիական հասարակության «ցանցային» կառույցները շեղում են ժողովրդավարական հարաբերությունների սկզբունքները՝ քաղաքական կուսակցություններին և էլիտաներին հարկադրելով փնտրել պետական իշխանության ձգտելու նոր հնարավորություններ և ուղիներ:

---

[10] Голосов Г.В., Шевченко Ю.Д. Независимые кандидаты и зависимые избиратели: влияние социальных сетей на электоральную политику в России / Полис. Университетская политология в России. Москва 1998